ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-9-2-Ա

ք. Երևան 04.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում քննարկեց 2023 թվականի մայիսի 22-ին արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված «Վելլար գրուպ» ՍՊԸ ընկերության (Երևան 0053, Արին-Բերդի 3/21, AM) «Կատարելություն: Առանց բացառությունների» (No20222342) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «Կատարելություն: Առանց բացառությունների» բառային ապրանքային նշանն իրենից ներկայացնում է գովաբանական բնույթի նիշ՝ նշելով թե՛ ապրանքների և թե՛ ծառայությունների գերազանց, կատարյալ լինելու փաստը, ուստի վերը նշված հիմքերով այն չի կարող գրանցվել որպես ապրանքային նշան: Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ապրանքային նշանը նիշ է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայություններն այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, հետևաբար ապրանքային նշանն իր հիմնական ֆունկցիան կատարելով և որպես ապրանքային նշան ծառայելով, պետք է սպառողին հնարավորություն ընձեռի մեկ տնտեսվարողի ապրանքներն և (կամ) ծառայությունները մեկ այլ տնտեսվարողի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար, իսկ հայտարկված

ապրանքային նշանը վերոնշյալ հատկությունը չունի: Անդրադառնալով Ձեր կողմից ներկայացված նկատառումներին առ այն, որ հայտատուն հրաժարվում է «Կատարելություն» բառի նկատմամբ բացառիկ իրավունքի հայտարկումից և «Առանց բացառությունների» արտահայտությունը, որը զբաղեցնում է գերիշխող դիրք, որևէ աղերս չունի տվյալ դեպքում ինքնուրույն պահպանության ոչ ենթակա տարրերի դասին դասվելու հետ, և նիշը ենթակա է գրանցման որպես ապրանքային նշան, ցանկանում ենք հավելել, որ հայտարկված ապրանքային նշանում առկա «Կատարելություն» և «Առանց բացառությունների» գրառումները ունեն ընդհանուր կապ և լրացնում են մեկը մյուսին: Ուստի վերջիններիս համակցությունը չի ապահովում նիշի մեջ մտնող տարրերի ընկալումից տարբերվող ընկալման այլ որակական մակարդակ և այդ կապի արդյունքում է նիշը դառնում գովաբանական բնույթի նիշ: Հետևաբար նիշը ընկալվում է իր ամբողջության մեջ առանց տարանջատելու վերը նշված գրառումները:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին, քանի որ չնայած ներկայացված ապրանքային նշանը գովաբանություն պարունակող կարգախոս է, սակայն «Կատարելություն» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով ներկայացված ապրանքային նշանը իր ամբողջության մեջ որպես արտահայտություն կարող է գրանցվել:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված «Վելլար գրուպ» ՍՊԸ ընկերության «Կատարելություն: Առանց բացառությունների» (No20222342) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական

փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակի բավարարել, փորձաքննության որոշումը մասնակիորեն չեղյալ ճանաչել և ապրանքային նշանի վկայագիր տալ, «Կատարելություն» տարրին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ